

Ջրամեկուսիչ նյութեր BTM

BITUMER BTR 100-ը ջրային հիմքի վրա ջրիկ բիտումային էմուլսիա է, ինչը կիրառվում է կիրառվում է որպես նախաներկ (грунтовка) ջրամեկուսացման իրականացման համար:



Կիրառման ոլորտը

- Շենքերի հիմքերի և նկուղային արտաքին պատերի անխոնավաթափանցելիություն ապահովելու համար,
- որպես ջրամեկուսիչ նյութ՝ տեռասաների, տանիքների, բաղնիքների, խոհանոցային և նման այլ տարածքների չոր կամ թեթև խոնավ մակերևույթները պատելու համար,
- որպես նախաներկ՝ բիտումային ծածկերի տակ,
- որպես կապակցանյութ և նախաներկի համար նյութ՝ ապակեթելքի (стекловолокно), քարանի (холст) և ամրանավորման այլ նման մեթոդների կիրառման համար,
- պողպատյա կոնստրուկցիաների, խողովակների և նման այլ մետաղական մակերևույթների պատշպանության համար,
- որպես հավելանյութ շաղախներում և ցեմենտավազային սվաղներում անթափանցելիության և հարակցման (ադիեզիա) բարձրացման համար,
- որպես շինարարական կաղապարամածի (опалубка) քսուք՝ ջրի ազդեցությունից որակի

վատթարացումը կանխելու և պատրաստի կոնստրուկցիաներից կաղապարամածի (опалубка) հեշտ անջատման նպատակով:

Առավելությունները

- Չի պարունակում լուծիչներ, հանդիսանում է էկոլոգիապես մաքուր ապրանք և կարող է հանգիստ օգտագործվել փակ տարածքներում,
- կարելի է կիրառել չոր և խոնավ մակերևույթների վրա,
- չորանալուց հետո մակերևույթի վրա գոյացնում է մշտական անջրաթափանց և անխոնավաթափանց շերտ,
- կիրառվում է որպես նախաներկ (грунтовка) բիտումային և մեկուսիչ ծածկերի տակ և որպես հավելանյութ ցեմենտային հիմքի վրա շաղախներում՝ անթափանցելիության և հարակցման (ադիեզիա) բարձրացման համար:

Կիրառման եղանակը

Մեկուսացման իրականացման համար նախաներկով պատելուց առաջ պետք է ստուգել մակերևույթի հարթությունը, չորությունը և մաքրությունը, բացի դրանից՝ ստուգվում է թեքության առաջացման համար իրականացվող սվաղի շերտը: BTR 200-ը մակերևույթի վրա պատվում է խոզանակի կամ ատրճանակի օգնությամբ՝ 1քառ.մ վրա 400գ չափով, այնուհետև անհրաժեշտ է սպասել մինչև լրիվ չորանալը: Անհրաժեշտության դեպքում նյութը կարելի է նոսրացնել ջրով 20% համամասնությամբ: Եղանակային պայմաններից կախված չորանալու ժամանակը տևում է 4-5ժամ: Եթե նյութը պատվում է 2 շերտով, ապա 2-րդ շերտն անհրաժեշտ է պատել միայն 1-ին շերտի ամբողջովին չորանալուց

հետո: Մեմբրանի տեղադրման աշխատանքները սկսում են միայն նախաներկի ամբողջովին չորանալուց հետո:

BTR100-ի ծախսը

Կախված մակերևույթի հարթությունից՝ միջինում 400գ/մ²

Փաթեթավորումը

Bitumer BTR100-ը թողարկվում է պլաստիկ տարաներով 15կգ (նետոն) քաշով:

Պահպանման պայմանները

Bitumer BTR100-ը պետք է պահել զով փակ տարածքներում և պահեստավորել ուղղաձիգ դիրքով: Չենթարկել արևի ուղիղ ճառագայթների ազդեցությանը: